# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

## Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի զորքերի (ուժերի) Միացյալ խմբավորման մասին

Հայաստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը, այսուհետև՝ Կողմեր,

ղեկավարվելով 1995 թվականի մարտի 16-ի՝ «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին» պայմանագրի, 1997 թվականի օգոստոսի 29-ի՝ «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» պայմանագրի, ինչպես նաև 2010 թվականի դեկտեմբերի 10-ի՝ «Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության հավաքական անվտանգության համակարգի ուժերի և միջոցների կազմավորման և գործունեության կարգի մասին» համաձայնագրի դրույթներով,

հիմնվելով 1992 թվականի մայիսի 15-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի վրա,

ընդունելով հավաքական անվտանգության Կովկասյան տարածաշրջանում համաձայնեցված գործողությունների անհրաժեշտությունը՝ ի շահ Կողմերի անվտանգության ապահովման,

ելնելով զինված հարձակմանը (ագրեսիային), ինչպես նաև Կողմերի անվտանգության դեմ այլ մարտահրավերներին և սպառնալիքներին համարժեք արձագանք ապահովող՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի զորքերի (ուժերի) միացյալ խմբավորում կազմավորելու ուղղությամբ գործնական միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունից,

հաստատելով Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի միջև փոխգործակցության հետագա ամրապնդմանը, տարածաշրջանում խաղաղության և անվտանգության հաստատմանը ակտիվ և արժանի ներդրում կատարելու իրենց ձգտումը,

հաշվի առնելով հավաքական անվտանգության Կովկասյան տարածաշրջանում Կողմերի տարածքների առանձնացվածությունը և դրանց սահմաններում լուծվող օպերատիվ-ռազմավարական խնդիրների ծավալը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

## Հոդված 1

Հավաքական անվտանգության Կովկասյան տարածաշրջանում Կողմերի անվտանգության ապահովման նպատակով Կողմերը ստեղծում են Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի զորքերի (ուժերի) միացյալ խմբավորում:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի զորքերի (ուժերի) միացյալ խմբավորման ուժերն ու միջոցները մարտական պատրաստականության բարձր աստիճանների բերելու, ազգային բաղադրիչները միացյալ հրամանատարությանը վերաենթակայեցնելու, խմբավորումը ծավալելու և կիրառելու կարգը սահմանվում է սույն Համաձայնագրին կից և դրա անբաժանելի մասը կազմող՝ «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի զորքերի (ուժերի) միացյալ խմբավորման մասին» կանոնակարգով:

## Հոդված 2

Սույն Համաձայնագրի նպատակների համար ներքոնշյալ հասկացությունները նշանակում են.

«ռազմական անվտանգություն» - ուժի կիրառման կամ դրա կիրառման սպառնալիքի հետ կապված՝ արտաքին ու ներքին ռազմական սպառնալիքներից Կողմերի քաղաքացիների և հասարակությունների կենսական կարևորություն ունեցող շահերի պաշտպանվածության վիճակ,

«զորքեր (ուժեր)» - Միացյալ խմբավորման կազմի մեջ Կողմերի կողմից առանձնացված՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի, ինչպես նաև այլ զորքերի, զինվորական կազմավորումների ու մարմինների, զինվորական կառավարման մարմիններ, միավորումներ, կազմավորումներ, զորամասեր և ստորաբաժանումներ,

«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի զորքերի (ուժերի) միացյալ խմբավորում» - Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի կառավարման մարմիններ և զորքեր (ուժերը), ինչպես նաև Կողմերի այլ զորքեր, զինվորական կազմավորումներ ու մարմիններ, որոնք ծավալված են տարածաշրջանում ագրեսիայի անմիջական սպառնալիքի ժամանակաշրջանում կամ պատերազմի ժամանակ հնարավոր ագրեսիան հետ մղելու համար և պլանավորված են կիրառվել միացյալ հրամանատարության ներքո՝ միասնական մտահղացման և պլանի համաձայն,

«միացյալ հրամանատարություն» - Միացյալ խմբավորման զինվորական կառավարման մարմին,

«Կառավարման միացյալ համակարգ» - Միացյալ խմբավորման կառավարման կազմակերպատեխնիկական հիմքը կազմող՝ Կողմերի

կառավարման մարմինների, կառավարման կետերի և կառավարման միջոցների՝ գործառնականորեն փոխկապակցված համակցություն,

«ագրեսիայի անմիջական սպառնալիքի ժամանակաշրջան» - Կողմերից մեկի կամ երկուսի նկատմամբ՝ կենսագործունեության տարբեր ոլորտներում արտաքին իրադրության կտրուկ սրմամբ, ռազմական սպառնալիքի աճմամբ և ռազմական հակամարտության սանձազերծման համար պայմանների առաջացմամբ բնութագրվող խաղաղ ժամանակաշրջանի հատված,

«տարածաշրջան» - Հավաքական անվտանգության Կովկասյան տարածաշրջանի՝ քաղաքատնտեսական, վարչական, ֆիզիկաաշխարհագրական, ազգային-մշակութային և այլ պայմանների ընդհանրություն ունեցող մաս, որի սահմաններում գտնվում է ռազմավարական նշանակության պաշտպանական ենթակառուցվածքի օբյեկտների զգալի մասը, ինչպես նաև տեղաբաշխվում են (կայանավորվում են) և կարող են ծավալվել ու կիրառվել Կողմերի զորքերի (ուժերի) խմբավորումները:

**Հոդված 3**

Սույն Համաձայնագրի իրագործման նպատակով Կողմերը նշանակում են լիազորված մարմիններ (այսուհետև՝ Լիազորված մարմիններ).

Հայաստանի Հանրապետության կողմից՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն,

Ռուսաստանի Դաշնության կողմից՝ Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարություն:

**Հոդված 4**

1. Միացյալ խմբավորման կազմը սահմանում են Լիազորված մարմինները ռազմաքաղաքական իրավիճակի համատեղ վերլուծության և համաձայնեցված եզրահանգումների հիման վրա՝ հաշվի առնելով հնարավոր սպառնալիքների ուղղվածությունը և զորքերի (ուժերի) կիրառման ընդհանուր մտահղացման հիման վրա:

2. Խաղաղ ժամանակ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կառուցվածքում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներկայացուցիչների թվակազմից կրճատված կազմով գործում է Միացյալ խմբավորման հրամանատարություն:

**Հոդված 5**

Լիազորված մարմինները մշակում, համաձայնեցնում և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի ու Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի հաստատմանն են ներկայացնում Միացյալ խմբավորման կիրառման

պլանավորման առաջարկությունները՝ փաստաթղթերի ցանկն ու բովանդակությունը, դրանց մշակման և գործողության մեջ դնելու կարգը:

Միացյալ խմբավորման կիրառման համատեղ պլանավորումը կատարվում է նախապես՝ խաղաղ ժամանակ, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի ու Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի հաստատած Միացյալ խմբավորման կիրառման ընդհանուր մտահղացմանը համապատասխան:

**Հոդված 6**

1. Լիազորված մարմինները համատեղ սահմանում են խաղաղ ժամանակ փոխգործակցության կազմակերպման կարգը ռազմաքաղաքական իրավիճակի վերլուծության, միացյալ խմբավորման կիրառման ընդհանուր մտահղացման մշակման, դրա կիրառման համատեղ պլանավորման ժամանակ:

2. Ագրեսիայի անմիջական սպառնալիքի ժամանակաշրջանում և պատերազմի ժամանակ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի միջև փոխգործակցության կազմակերպման նպատակով Կողմերի Լիազորված մարմինները նախատեսում են օպերատիվ խմբեր ուղարկել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբ և Ռուսաստանի Դաշնության հարավային ռազմական օկրուգի շտաբ:

Օպերատիվ խմբերի տեղաբաշխման վայրերը որոշում են Լիազորված մարմինները, որոնք ապահովում են դրանց ընդունումը, տեղակայումը և գործառնությունը, պայմաններ են ստեղծում ենթակառուցվածքի անհրաժեշտ օբյեկտների, կապուղիների և կապի միջոցների օգտագործման համար:

**Հոդված 7**

1. Կողմերն ինքնուրույն են իրականացնում Միացյալ խմբավորման կազմի մեջ առանձնացված իրենց զորքերի (ուժերի) նյութատեխնիկական և ֆինանսական ապահովումը, ստեղծում և լրացնում են նյութական միջոցների պաշարները մինչև համաձայնեցված չափաքանակները՝ Կողմերի սահմանած կարգին համապատասխան:

2. Այն դեպքերում, երբ Միացյալ խմբավորման զորքերի (ուժերի) նյութատեխնիկական ապահովումը դժվարացված է, նյութական միջոցների պաշարների լրացումը, սպառազինության և ռազմական տեխնիկայի վերականգնումը, նյութատեխնիկական ապահովման այլ միջոցառումների իրագործումը կարող է իրականացվել Կողմերից որևէ մեկի հաշվին:

Ընդ որում, օգտագործված նյութական միջոցների լրացումը, նյութական միջոցների ու ծառայությունների տրամադրման համար հետագա փոխհաշվարկները կատարվում են Լիազորված մարմինների միջև լրացուցիչ

պայմանավորվածությամբ և միջազգային այն պայմանագրերին համապատասխան, որոնց մասնակից են Կողմերը:

## Հոդված 8

1. Լիազորված մարմիններն անցկացնում են համաձայնեցված միջոցառումներ Միացյալ խմբավորման միավորված կառավարման համակարգի ստեղծման ուղղությամբ:

Միավորված կառավարման համակարգն ստեղծվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի կազմակերպական սկզբունքների և տեխնիկական միջոցների հիման վրա:

2. Լիազորված մարմինները համատեղ աշխատանքներ են իրականացնում զորքերի, հետախուզության և զենքի, կառավարման մարմինների հաշվողական կենտրոնների կառավարման ավտոմատացված համակարգերի, տեխնիկական և նյութական բազայի միասնականացումն ապահովելու, ինչպես նաև մարտական գործողությունների և օպերատիվ-մարտավարական խնդիրների մաթեմատիկական մոդելների մշակումներն ապահովելու ուղղությամբ:

## Հոդված 9

Սույն Համաձայնագրի իրագործման ընթացքում փոխանցվող ցանկացած տեղեկություն, անկախ դրա տրամադրման ձևից, Կողմերը պետք է օգտագործեն բացառապես Համաձայնագրի նպատակներին համապատասխան: Մի Կողմի կողմից ստացված տեղեկությունը չպետք է օգտագործվի ի վնաս մյուս Կողմի:

Կողմերը պարտավորվում են երրորդ կողմի չփոխանցել սույն Համաձայնագրի իրագործման ընթացքում ստեղծված կամ ստացված տեղեկությունը՝ առանց մյուս Կողմի նախնական գրավոր համաձայնության:

Սույն Համաձայնագրի իրագործման ընթացքում և դրա գործողության ավարտից հետո Կողմերի գաղտնի տեղեկությունների փոխանակման կարգը, պաշտպանության միջոցները և պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև գաղտնի տեղեկատվության փոխադարձաբար պաշտպանության մասին 2002 թվականի նոյեմբերի 5-ի համաձայնագրով:

## Հոդված 10

1. Սույն Համաձայնագիրն ուղղված չէ երրորդ պետությունների դեմ և չի շոշափում Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները, որոնք բխում են այլ միջազգային պայմանագրերից, որոնց մասնակից են իրենք:

2. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով:

3. Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման և/կամ կիրառման հետ կապված Կողմերի միջև բոլոր վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Լիազորված մարմինների միջև բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

4. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի կողմից կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

5. Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով և ինքնաբերաբար երկարաձգվում է հետագա հնգամյա ժամանակահատվածներով, եթե Կողմերից որևէ մեկը համապատասխան ժամանակահատվածն ավարտվելուց ոչ ուշ, քան վեց ամից առաջ մյուս Կողմին գրավոր չի ծանուցում դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Մոսկվա քաղաքում 2016 թվականի նոյեմբերի 30-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

| | |
|---|---|
| **Հայաստանի Հանրապետության կողմից՝** | **Ռուսաստանի Դաշնության կողմից՝** |

**Հավելված՝**
**Հայաստանի Հանրապետության և**
**Ռուսաստանի Դաշնության միջև՝ Հայաստանի**
**Հանրապետության զինված ուժերի և**
**Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի**
**զորքերի (ուժերի) միացյալ խմբավորման մասին**
**համաձայնագրին կից**

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
## Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի զորքերի (ուժերի) միացյալ խմբավորման մասին

### I. Ընդհանուր դրույթներ

1. Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի զորքերի (ուժերի) միացյալ խմբավորումը, այսուհետև՝ Միացյալ խմբավորում, նախատեսված է տարածաշրջանում ռազմական անվտանգության ապահովման համար:

2. Միացյալ խմբավորման կիրառման պլանավորումը կատարվում է խաղաղ ժամանակ Կողմերի զինված ուժերի գլխավոր շտաբների համատեղ հրահանգի հիման վրա:

Միացյալ խմբավորման կիրառման պլանը մշակվում է Միացյալ խմբավորման հրամանատարության և Հայաստանի Հանրապետության տարածքում տեղակայված ռուսաստանյան ռազմակայանի կազմից հատկացված օպերատիվ խմբի կողմից և հաստատվում է Կողմերի զինված ուժերի գլխավոր շտաբների պետերի կողմից:

Միացյալ խմբավորման հրամանատարի համար օպերատիվ հրահանգը մշակվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի օպերատիվ վարչության և հարավային ռազմական օկրուգի հրամանատարության կողմից և ստորագրվում է Կողմերի զինված ուժերի գլխավոր շտաբների պետերի կողմից:

Համակողմանի ապահովման տեսակների վերաբերյալ հրահանգային (կարգադրական) փաստաթղթերը մշակվում են Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի, հարավային ռազմական օկրուգի համապատասխան վարչությունների (ծառայությունների, բաժինների) կողմից և ստորագրվում են՝

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի օպերատիվ վարչության պետի և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զորատեսակների (վարչությունների, ծառայությունների, բաժինների) համապատասխան պետերի կողմից,

հարավային ռազմական օկրուգի շտաբի պետի և հարավային ռազմական օկրուգի զորատեսակների (վարչությունների, ծառայությունների) համապատասխան պետերի կողմից:

## II. Միացյալ խմբավորման հիմնական խնդիրները

3. Միացյալ խմբավորման հիմնական խնդիրներն են.

տարածաշրջանի սահմաններում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության դեմ զինված հարձակման (ագրեսիայի) անմիջական նախապատրաստման ժամանակին բացահայտումն ու դրա հետ մղումը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի զորքերի (ուժերի) խմբավորումների, ինչպես նաև Կողմերի այլ զորքերի, զինվորական կազմավորումների և մարմինների հետ փոխգործակցությամբ,

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության պետական սահմանի ցամաքային մասի պաշտպանությունը պատասխանատվության սահմանված շրջանակներում, այդ թվում՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության հավաքական անվտանգության համակարգի ուժերի և միջոցների հետ համատեղ,

օդատիեզերական տարածությունում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության պետական սահմանի ծածկապաշտպանությանը մասնակցությունը,

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության՝ տարածաշրջանում տեղակայված զորքերի և ծայրահեղ կարևորության օբյեկտների հակաօդային պաշտպանությանը մասնակցությունը,

զբաղեցրած շրջանների, տեղանքի սահմանագծի, դիրքերի և օբյեկտների պահումը,

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի զորքերի (ուժերի) խմբավորումների, ինչպես նաև Կողմերի այլ զորքերի, զինվորական կազմավորումների և մարմինների հետ փոխգործակցությամբ հակառակորդի ներխուժած զորքերի խմբավորումների ջախջախումը,

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության պետական և զինվորական կառավարման համակարգերի ռադիոէլեկտրոնային միջոցների ռադիոէլեկտրոնային պաշտպանությունը,

Միացյալ խմբավորման դեմ տեղեկատվական ներգործության միջոցների և մեթոդների կիրառման աղբյուրների և սպառնալիքների բնույթի բացահայտումը ու գնահատումը,

Միացյալ խմբավորման անձնակազմի պաշտպանությունը հակամարտող կողմի կողմից տեղեկատվահոգեբանական միջոցների ու ներգործության մեթոդների կիրառումից,

Միացյալ խմբավորման տեղեկատվական ենթակառուցվածքի պաշտպանությունը հակամարտող կողմի կողմից տեղեկատվական-տեխնիկական միջոցների ու ներգործության մեթոդների կիրառումից,

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի սահմանած այլ խնդիրներ:

## III. Միացյալ խմբավորման կառավարումը

4. Միացյալ խմբավորման կառավարման համար ստեղծվում է Միացյալ հրամանատարություն, որը գլխավորում է Միացյալ խմբավորման հրամանատարը:

Միացյալ խմբավորման հրամանատարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարը՝ համաձայնեցնելով Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի հետ:

Միացյալ խմբավորման հրամանատարը ենթարկվում է.

խաղաղ ժամանակ՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետին,

ագրեսիայի անմիջական սպառնալիքի ժամանակաշրջանում և պատերազմի ժամանակ՝ ստեղծվող իրավիճակից կախված՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետին կամ հարավային ռազմական օկրուգի զորքերի հրամանատարին՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի որոշմամբ:

5. Ագրեսիայի անմիջական սպառնալիքի դեպքում և պատերազմի ժամանակ Միացյալ խմբավորման կառավարումն իրականացվում է Միացյալ խմբավորման կառավարման կետից:

6. Ագրեսիայի անմիջական սպառնալիքի ժամանակաշրջանում և պատերազմի ժամանակ Միացյալ խմբավորման հրամանատարը համարվում է Միացյալ խմբավորման ամբողջ անձնակազմի ուղղակի պետը, անձամբ պատասխանատվություն է կրում Միացյալ խմբավորման վրա դրված խնդիրների կատարման, զորքերի (ուժերի) մարտական ու զորահավաքային պատրաստականության համար՝ նրանց համար սահմանված ենթակայության ձևին համապատասխան, և նրանց կողմից խնդիրներն ըստ նշանակության կատարման համար, ինչպես նաև.

իրականացնում է Միացյալ խմբավորման կազմի մեջ մտնող զորքերի (ուժերի) կառավարումը՝ նրանց համար սահմանված ենթակայության ձևին համապատասխան,

սահմանված կարգով իրականացնում է Միացյալ խմբավորման կազմի մեջ մտնող զորքերի (ուժերի) անցումը խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի,

կազմակերպում է անմիջականորեն և օպերատիվ առումով ենթակա զորքերի (ուժերի) կիրառումը,

ղեկավարում է օպերատիվ պլանավորման հարցերով փաստաթղթերի մշակումը (ճշգրտումը) և սահմանված կարգով ներկայացնում է հաստատման,

իրականացնում է անմիջականորեն և օպերատիվ առումով ենթակա զորքերի (ուժերի) մարտական կառավարման կազմակերպման ղեկավարումը,

ղեկավարում է Միացյալ խմբավորման կազմի մեջ մտնող զորքերի (ուժերի) օպերատիվ, մարտական և զորահավաքային պատրաստության, միջոցառումների անցկացումը և կազմակերպում է անցկացման հսկողությունը,

կազմակերպում է Միացյալ խմբավորման կազմի մեջ մտնող զորքերի (ուժերի) անձնակազմի դաստիարակչական, բարոյահոգեբանական վիճակի, իրավական կարգի և զինվորական կարգապահության պահպանման, ինչպես նաև զինվորական ծառայության անվտանգության ապահովման աշխատանքները,

կազմակերպում է Միացյալ խմբավորման կազմի մեջ մտնող զորքերի (ուժերի) տեղեկատվական անվտանգության ապահովումը և գաղտնի տեղեկատվության պաշտպանությունը,

կազմակերպում է Միացյալ խմբավորման կազմի մեջ մտնող զորքերի (ուժերի) գործունեության համակողմանի ապահովումը (բացառությամբ Կողմերի զինվորական կառավարման կենտրոնական մարմինների ու նրանց տարածքային կառուցվածքների (ստորաբաժանումների) իրավասությանը վերաբերող ապահովման ձևերից):

Միացյալ խմբավորման վրա դրված խնդիրների շրջանակներում պաշտպանության հարցերով Միացյալ խմբավորման հրամանատարի արձակած հրամանները և հրահանգները պարտադիր են զորքերի (ուժերի) Միացյալ խմբավորման կողմից կատարման համար՝ նրանց համար սահմանված ենթակայության ձևին համապատասխան:

Միացյալ խմբավորման հրամանատարն իրականացնում է նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի հրամաններով (հրամանագրերով) և հրահանգներով (կարգադրություններով), Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի, նրա տեղակալների և Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարի, նրա տեղակալների հրամաններով, հրահանգներով ու ցուցումներով, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի գլխավոր շտաբի հրահանգներով, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

7. Ագրեսիայի անմիջական սպառնալիքի ժամանակաշրջանում և պատերազմի ժամանակ Միացյալ խմբավորման հրամանատարի անմիջական ենթակայությանն են անցնում Միացյալ խմբավորման կազմի մեջ մտնող զորքերը (ուժերը):

Անմիջական ենթակայությունը նախատեսում է Միացյալ խմբավորման հրամանատարին բոլոր հարցերով ենթակա լինելը: Անմիջականորեն ենթակա զորքերը (ուժերը) օգտագործվում են և կատարում են Միացյալ խմբավորման հրամանատարի պլաններով և որոշումներով առաջադրված խնդիրները:

8. Միացյալ խմբավորման կիրառման պլանի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի համատեղ հրամաններով (հրամանագրերով) և հրահանգներով (կարգադրություններով), Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի և Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի գլխավոր շտաբի համատեղ հրահանգներով, պաշտպանության բնագավառի խնդիրներ լուծելու նպատակով, Միացյալ խմբավորման հրամանատարի օպերատիվ ենթակայության տակ կարող են փոխանցվել զորքեր (ուժեր):

Օպերատիվ ենթակայությունը մարտական խնդիրների նախապատրաստման և կատարման համար, այդ թվում՝ զորահավաքային և մարտական պատրաստականության հարցերով, նախատեսում է զորքերի (ուժերի) մշտական կամ ժամանակավոր ենթակայություն Միացյալ խմբավորման հրամանատարին: Ընդ որում՝ կադրային աշխատանքի և ապահովման հատուկ տեսակների կազմակերպման հարցերով դրանք պահպանում են ենթակայությունը համապատասխան զինվորական կառավարման մարմիններին, ինչպես նաև այլ զորքերի, զինվորական կազմավորումների և մարմինների կառավարման մարմիններին: Միացյալ խմբավորման հրամանատարի օպերատիվ ենթակայության ներքո գտնվող զորքերը (ուժերը) կիրառվում են նրա որոշումներով և պլաններով:

Միացյալ խմբավորման հրամանատարն իրականացնում է օպերատիվ կարգով իր ենթակայության տակ անցած զորքերի (ուժերի) մարտական խնդիրների առաջադրումը, կազմակերպում է և վերահսկում դրանց կատարումը, իրականացնում է նրանց կառավարումը և պատասխանատվություն է կրում առաջադրված խնդիրների կատարման համար, կազմակերպում է համատեղ պատրաստությունն ու փոխգործակցությունը Միացյալ խմբավորման կազմի մեջ չմտնող զորքերի (ուժերի) հետ:

Միացյալ խմբավորման կազմի մեջ մտնող կառավարման մարմինների և զորքերի (ուժերի) մարտական պատրաստության գործնական նախապատրաստումն իրականացվում է խաղաղ ժամանակ դրանց պատրաստման պլանով, ինչպես նաև օպերատիվ և մարտական պատրաստության համատեղ միջոցառումների ընթացքում:

Լիազորված մարմիններն ամեն տարի պլանավորում են զորքերի (ուժերի) օպերատիվ և մարտական պատրաստության համատեղ միջոցառումներ, պատասխանատվություն են կրում պլանների մշակման, ըստ բովանդակության,

ներգրավվող զորքերի (ուժերի) կազմի, միջոցառումների անցկացման կարգի դրանց համաձայնեցման, ինչպես նաև դրանց իրագործման համար:

9. Միացյալ հրամանատարությունը կազմավորվում է ագրեսիայի անմիջական սպառնալիքի դեպքում կամ պատերազմի ժամանակ, հանդիսանում է Միացյալ խմբավորման ռազմական կառավարման մարմին և նախատեսված է Միացյալ խմբավորման վրա դրված խնդիրների լուծման կազմակերպման ու ղեկավարման համար, Միացյալ խմբավորման հրամանատարին անմիջականորեն և օպերատիվ կարգով ենթակա զորքերի (ուժերի) կառավարման համար:

Միացյալ հրամանատարությունը կազմակերպում ու ապահովում է Միացյալ խմբավորման վրա դրված խնդիրների լուծումը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի ռազմական կառավարման մարմինների, ինչպես նաև Կողմերի այլ զորքերի, զինվորական կազմավորումների ու մարմինների հետ փոխգործակցությամբ:

Միացյալ հրամանատարությունն իր գործունեության մեջ ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի հրամաններով (հրամանագրերով) և հրահանգներով (ղեկավար հրահանգներով, կարգադրություններով), Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի, նրա տեղակալների և Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարի, նրա տեղակալների հրամաններով, հրահանգներով (ղեկավար հրահանգներով), ցուցումներով, Հայաստանի Հանրապետության գլխավոր շտաբի և Ռուսաստանի Դաշնության գլխավոր շտաբի հրահանգներով, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության այլ իրավական ակտերով:

Միացյալ հրամանատարությունը համալրվում է Կողմերի զորքերի (ուժերի) զինծառայողների և քաղաքացիական անձնակազմի հաշվին՝ խաղաղ ժամանակ մշակված Միացյալ հրամանատարության զինծառայողների և քաղաքացիական անձնակազմի պաշտոնների ցանկին համապատասխան, և Կողմերի զինծառայողների ու քաղաքացիական անձնակազմի տեղափոխման պլաններով:

Միացյալ հրամանատարության հաստիքակազմակերպչական կառուցվածքը համատեղ հաստատվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի գլխավոր շտաբի կողմից՝ ելնելով դրա վրա դրվող խնդիրների բնույթից ու ծավալից, և կազմված է վարչությունից, շտաբից, բաժիններից (բաժանմունքներից), ապահովման ծառայություններից և ստորաբաժանումներից:

Միացյալ հրամանատարության կառուցվածքային ստորաբաժանումների հիմնական գործառույթները և խնդիրները, պաշտոնատար անձանց լիազորություններն ու գործառութային պարտականությունները սահմանվում են Միացյալ խմբավորման հրամանատարի հրամանով:

10. Միացյալ խմբավորման շտաբը Միացյալ խմբավորման կառավարման հիմնական մարմինն է առաջադրված խնդիրների իրականացման ժամանակ:

Շտաբն իր աշխատանքը կատարում է Միացյալ խմբավորման հրամանատարի հրամանների, կարգադրությունների և հանձնարարությունների հիման վրա:

Միացյալ խմբավորման շտաբի հիմնական խնդիրներն են.

Միացյալ խմբավորման մարտական պատրաստության ապահովումն ու պահպանումը, մարտական գործունեության բոլոր տեսակների կազմակերպումը, մարտական հերթապահությունը և մարտական ծառայությունները,

զորքերի (ուժերի) մարտական կառավարման կազմակերպումը,

Միացյալ հրամանատարության բաժինների ու ծառայությունների գործունեության համակարգումը,

որոշումների ճշգրտման (ընդունման) համար Միացյալ խմբավորման հրամանատարության համար տվյալների հավաքումը, ընդհանրացումը, վերլուծությունը և իրավիճակի գնահատումը, առաջարկությունների և եզրակացությունների պատրաստումը,

խնդիրների մասին ժամանակին զորքերին (ուժերին) հասցնելն ու դրանց կատարման համար հսկողության կազմակերպման ապահովումը,

փոխգործակցության կազմակերպումը, համակողմանի ապահովումն ու կառավարումը:

11. Միացյալ հրամանատարությունն ունի սահմանված նմուշի կնիք և անկյունային դրոշմակնիք, իր գործունեությունն իրականացնելու համար անհրաժեշտ այլ կնիքներ և դրոշմակնիքներ:

Միացյալ հրամանատարության պաշտոնական լեզուն հանդիսանում է ռուսերենը:

## IV.Միացյալ խմբավորման տեղաբաշխման կարգը

12. Միացյալ խմբավորման կիրառման համար որոշումների ընդունումն իրականացվում է ռազմական անվտանգության ապահովման նպատակներով:

13. Միացյալ խմբավորման տեղաբաշխման և կիրառման համար որոշումը համատեղ ընդունվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի կողմից:

14. Միացյալ խմբավորման տեղաբաշխման և կիրառման համար որոշումների ընդունման մեխանիզմը նախատեսում է Կողմերի պետական և ռազմական կառավարման մարմինների գործունեության և փոխգործակցության հետևողականություն:

15. Լիազորված մարմինները Կողմերի գործադիր իշխանության շահագրգիռ մարմինների հետ համատեղ մշակում և սահմանված կարգով ուսումնասիրման համար Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարին և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարին են ներկայացնում Միացյալ խմբավորման կիրառման և տեղաբաշխման մասին համատեղ որոշման նախագիծը:

16. Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի համատեղ որոշումների իրագործումն ապահովելու նպատակով Լիազորված մարմինները հրապարակում են իրավական ակտեր (հրամաններ, հրահանգներ, կարգադրություններ), որոնց համապատասխան՝ իրականացվում են.

զորքերը (ուժերը) մարտական պատրաստության բարձր աստիճանի բերելը,

Միացյալ հրամանատարության կազմում նշանակված՝ Կողմերի զինված ուժերի պաշտոնատար անձանց ժամանումը կառավարման համապատասխան կետեր,

Միացյալ խմբավորման կիրառման Պլանի ճշգրտումը (վերամշակումը),

Միացյալ խմբավորման կազմում զորքերի (ուժերի) ընդունումը (փոխանցումը), դրանց ծավալումը և կիրառման համար անմիջական նախապատրաստումը: